ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ

Հայաստանի Հանրապետությունում զինվորական հաշվառման ենթակա անձանց, զորակոչիկների և զինծառայողների իրավունքների և պարտականությունների մասին

Վանաձոր
2018

Գրքույկը կազմեցին՝

Սյուզաննա Սողոմոնյան
Արմինե Սադիկյան

Խմբագիր՝

Արթուր Սաքունց

Գրքույկի նպատակն է իրազեկել ՀՀ զինապարտ քաղաքացիներին իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Գրքույկը կարող է օգտակար լիներ մասնավորապես զինվորական հաշվառման տարիքի և զորակոչային տարիքի ՀՀ քաղաքացիների, իրենց ծնողների և հարազատների, ներկայացուցիչների, զինվորական ծառայություն անցնող քաղաքացիների, իրենց ծնողների և հարազատների, ինչպես նաև իրավաբանների և իրավունքի այս բնագավառով հետաքրքվող այլ անձանց համար: Սույն գրքույկը տպագրվել է 2018 թ-ին, այնուհետեւ պարբերաբար ենթարկվել փոփոխությունների՝ օրենսդրական փոփոխություններին համապատասխան:

Գրքույկը պատրաստվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդի (NED) ֆինանսական աջակցությամբ: Սույն գրքույկում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են եւ հնարավոր է, որ չհամապատասխանեն Ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդի (NED) տեսակետներին:

Բովանդակություն

1. Քաղաքացիների իրավունքները և պարտականությունները զինվորական հաշվառման ընթացքում……...6

2. Զորակոչիկների իրավունքները և պարտականությունները զորակոչի ընթացքում……..……..……15

3. Զինծառայողների իրավունքները և պարտականությունները զինծառայության ընթացքում…….…….……26

4. Տեղեկատվություն սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների համար……48

Հավելված Ա. Զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացման մեխանիզմները, ներգրավված մարմինները և նրանց գործառույթները ……...…….……..50

Հավելված Բ. Նախազորակոչային զորակոչային տարիքի անձանց բժշկական հետազոտությունները……..…66

Հավելված Գ. Դիմումների օրինակելի ձևեր ……..... 68

Հավելված Դ. Քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները զինվորական ծառայության ընթացքում չթույլատրվող ֆիզիկական վարժությունների ցանկը ……..…72

Հապավումների ցանկ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՊՆ՝ Պաշտպանության նախարարություն

ԶՈՒ՝ զինված ուժեր

ԿԲՀ՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողով

ԶԲՀ՝ Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողով

ԿՌԲՀ՝ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով

ՀՌԲՀ՝ Հոսպիտալային ռազմաբժշկական հանձնաժողով

ՀՌԲՕՀ՝ Հոսպիտալային ռազմաբժշկաօդաչուական հանձնաժողով

ԿՊ ՌԲՀ՝ Կենտրոնական պոլիկլինիկայի ռազմաբժշկական հանձնաժողով

ՌՈՒՀ՝ ռազմաուսումնական հաստատություն

ԱՊ ԶԲՀ՝ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության զորակոչային բժշկական հանձնաժողովները

ՌԲՎ՝ Ռազմաբժշկական վարչություն

ՌՈՒՀ՝ Ռազմաուսումնական հաստատություն

ԲՍՓ՝ բժշկասոցիալական փորձաքննություն

ՀՀ ԱՆ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդված

1. Քաղաքացիների իրավունքները և պարտականությունները զինվորական հաշվառման ընթացքում

Զինապարտությունը ՀՀ պաշտպանությանը մասնակցելու՝ քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է:

ՀՀ քաղաքացիների զինապարտությունն ընդգրկում է նաև զինվորական հաշվառումը:

Եթե դուք 16 տարեկան արական սեռի ներկայացուցիչ եք՝ Դուք ենթակա եք զինվորական հաշվառման:

Եթե դուք 18 տարեկան իգական սեռի ներկայացուցիչ եք և ստացել եք զինվորական մասնագիտություն կամ դիմել եք պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար՝ Դուք ենթակա եք զինվորական հաշվառման:

- Զինվորական հաշվառման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:[1]
- Հաշվառումը իրականացնում են Ձեր մշտական բնակության վայրի զինվորական կոմիսարիատը և ՀՀ զինվորական կոմիսարիատը (ըստ բնակության վայրի հաշվառում չունեցող և հյուպատոսական հաշվառման վերցված զինապարտներինը):

[1] ՀՀ կառավարության 03.12.2018 թ. թիվ 1269-Ն որոշումը՝ Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 657-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

- Ձեզ հաշվառման վերցրած լինելու վերաբերյալ փաստաթուղթը Ձեզ տրամադրված զինվորական հաշվառման գրքույկն է:[2]
- Զինվորական հաշվառման վերցվելու ժամանակ Դուք անցնում եք առողջական վիճակի բժշկական քննություն, որը կատարվում է **առաջնահերթ ու անվճար՝** պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում,
- Դուք իրավունք ունեք ծանոթանալ ձեր զինվորական հաշվառման վերաբերյալ տվյալներին, դրանցում շտկումներ կատարելու համար ներկայացնել առաջարկություններ:

Դուք պարտավոր եք՝

1. 16 տարին լրանալուն պես ներկայանալ Ձեր հաշվառման զինվորական կոմիսարիատ (հաշվառման վայր չունենալու դեպքում՝ ՀՀ զինվորական կոմիսարիատ, օտարերկրյա պետությունում բնակվելու դեպքում՝ տվյալ երկրում ՀՀ դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ),
2. հաշվառման վայրը փոխելու դեպքում զինվորական հաշվառման կանգնելու համար ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ՝ հաշվառման նոր վայր ժամանելուց հետո՝ **7-օրյա** ժամկետում,
3. հանդիսանալով զինվորական ծառայության ընթացքում դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրած անձ պատժի կրումից ազատվելու պահից **7-օրյա** ժամկետում ներկայանալ հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ:[3]

Դուք իրավունք ունեք[4]՝

---

[2] «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված

[3] «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված

[4] Յուրաքանչյուր իրավունք նախատեսում է այդ իրավունքի կատարման պարտավորությունը համապատասխան մարմնի կողմից:

1. **պահանջել,** որպեսզի հարգվի և պաշտպանվի Ձեր արժանապատվությունը՝ Ձեզ չդիմեն անհարգալից կերպով, չվիրավորեն[5]:

2. **զերծ մնալ** ցանկացած տեսակի խտրական դրսևորումներից՝ կապված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից[6]:

3. **փաստաթղթային կամ էլեկտրոնային** եղանակով **ծանուցված լինել** զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին, որը Դուք պետք է ստանաք **անձամբ**, ծանուցագրում պետք է նշվի զինվորական կոմիսարիատ ներակայանալու ժամկետները:[7]

4. **ազատվել** (բացակայել) աշխատանքից կամ արձակվել ուսումից՝ զինվորական կոմիսարիատի ծանուցագրում նշված անհրաժեշտ ժամանակով[8]:

5. անհրաժեշտության դեպքում **բուժում ստանալ անվճար և առաջնահերթ** կարգով պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում[9]:

6. Ձեր օրինական ներկայացուցչի միջոցով ստանալ պիտանիության մասին բժիշկ-փորձագետի **եզրակացության և առողջական վիճակի հետազոտության ակտերի օրինակները**[10]:

7. Անցնել այլընտրանքային ծառայություն:

---

[5] ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված

[6] ՀՀ Սահմանադրության 29–րդ հոդված

[7] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մաս

[8] «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-ին մաս

[9] «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված

[10] Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդված, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված

Ուշադրություն՝

Այլընտրանքային ծառայության անցնելու վերաբերյալ դիմումը անհրաժեշտ է ներկայացնել այն **տարածքային զինվորական կոմիսարիատ**, որտեղ Դուք **հաշվառված եք**: Դիմումը անձամբ ներկայացնելու դեպքում այն պետք է ներկայացնել 2 օրինակից, որից մեկի վրա դիմումը ընդունող զինվորական կոմիսարիատի ծառայողի կողմից նշում կկատարվի այն ստանալու մասին և այդ օրինակը կպահվի Ձեզ մոտ:

Դիմումի ներկայացման ժամկետները՝

Դիմումը պետք է ներկայացնել մինչև հերթական զորակոչին նախորդող **հունիսի 1-ը** կամ **նոյեմբերի 1-ը**: Եթե դիմումը ներկայացվել է այս ժամկետի խախտմամբ և ժամկետը բաց է թողնվել Ձեր (դիմումատուից անկախ պատճառներով), ապա անհրաժեշտ է նշել նաև այդ պատճառները: Այս դեպքում Տարածքային զինվորական կոմիսարիատը դիմումը ներկայացնելու ժամկետը բաց թողնելը կարող է համարել հարգելի:

Ժամկետների խախտմամբ ներկայացված դիմումը գրանցելու պահից 5 օրվա ընթացքում վերադարձնում է դիմումատուին:

Եթե դիմումի մեջ **չեն նշվել** ներկայացնելու ամիս, ամսաթիվը, տարեթիվը, դիմումատուի անունը, ազգանունը, հայրանունը, ստորագրությունը, բնակության վայրի հասցեն, նախընտրած այլընտրանքային ծառայության տեսակը, պարտադիր զինվորական ծառայության չանցնելու հիմնավորումները, ապա այն **5 օրվա ընթացքում** վերադարձվում է դիմումատուին՝ նշելով դիմումում թույլ տրված բոլոր ձևական սխալները: Դիմումը վերադարձվելուց հետո՝ **երկշաբաթյա ժամկետում**, դիմումատուն

իրավունք ունի վերացնելու դիմումում թույլ տրված բոլոր ձևական սխալները և այն կրկին ներկայացնելու տարածքային զինվորական կոմիսարիատ: Սահմանված ժամկետում դիմումը կրկին չներկայացնելու դեպքում դուք ենթական եք պարտադիր զինվորական ծառայության զորակոչի:
Եթե առկա են պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքեր, ապա տարածքային զինվորական կոմիսարիատը **30 օրվա ընթացքում** վերադարձնում է դիմումը Ձեզ, որից հետո հայտարարված զորակոչի ժամանակ օրենքով սահմանված կարգով ձևակերպվում է քաղաքացու՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու իրավունքը: Եթե նման պայմաններ առկա չեն, ապա դիմումը և Ձեր անձնական գործը ուղարկվում է Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողով: Հետագայում Ձեր դիմումը քննարկվում է Հանրապետական հանձնաժողովի նիստին, որի ժամանակի և վայրի մասին Դուք նախապես պետք է տեղեկացվեք: Դուք **իրավունք ունեք** մասնակցել Հանրապետական հանձնաժողովի նիստին, իսկ Հանրապետական հանձնաժողովի պահանջի դեպքում Ձեր ներկայությունը կարող է պարտադիր համարվել:

Հանրապետական հանձնաժողովը մշտապես գործող մարմին է և կազմված է տարածքային կառավարման, արդարադատության, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, ոստիկանության ու պաշտպանության բնագավառներում պետական մարմինների, ինչպես նաև վարչապետի աշխատակազմի՝ ազգային փոքրամասնությունների և կրոնի ոլորտները համակարգող ստորաբաժանման մեկական ներկայացուցիչներից: Հանրապետական հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է վարչապետը:

Ձեր դիմումի վերաբերյալ Հանրապետական հանձնաժողովի կողմից որոշում է կայացվում նիստին ներկա անդամների ձայների 2/3-ով, եթե

հանձնաժողովի նիստին ներկա է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Դիմումը քննարկելուց հետո Հանրապետական հանձնաժողովը եզրակացություն է կայացնում այլընտրանքային ծառայության ուղարկելու կամ դիմումը մերժելու մասին: Հանրապետական հանձնաժողովի կողմից քաղաքացու դիմումը քննարկելու և դրա վերաբերյալ եզրակացություն կայացնելու ժամկետը չի կարող գերազանցել մեկ ամիսը:

Այլընտրանքային ծառայության ուղարկելու մասին որոշումը և Հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից կայացված եզրակացությունները **հինգ աշխատանքային օրվա ընթացքում** ուղարկվում է Ձեզ (դիմումատուին), համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատ, Հանրապետական հանձնաժողով, ՀՀ ֆինանսների նախարարություն:

Հանրապետական հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա ընդունված հրամանները կարող են բողոքարկվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետին:

Ձեր դիմումը կարող է մերժվել, եթե՝
1) երկրորդ անգամ կանչվում եք Հանրապետական Հաձնաժողովի նիստին և անհարգելի պատճառով չեք ներկայանում.
2) ներկայացրել եք իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ.
3) դիմումն ակնհայտ անհիմն է:

Դիմումը մերժելու դեպքում դուք ենթական եք պարտադիր զինվորական ծառայության զորակոչի:

Ուշադրություն՝

Զինվորական ծառայության զորակոչվելուց հետո պարտադիր զինվորական ծառայությունը չի կարող փոխարինվել այլընտրանքային զինվորական ծառայությամբ:

Եթե երկքաղաքացի եք՝

Դուք ազատվում եք պարտադիր զինվորական ծառայությունից, եթե մինչև ՀՀ քաղաքացիություն ընդունելը **ոչ պակաս, քան 12 ամիս** ծառայել եք այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել եք այլընտրանքային զինվորական ծառայություն[11]:

Ուշադրություն՝

Երկքաղաքացին չի ազատվում զորահավաքից և վարժական հավաքից:

Եթե նաև այլ պետության քաղաքացի եք՝ Դուք ընդունելով այլ պետության քաղաքացիություն՝ չեք ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից, անկախ այն հանգամանքից՝ ծառայել եք այլ պետությունում, թե՝ ոչ:[12]

---

[11] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ

[12] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մաս

ՀՀ քաղաքացիություն կորցնելը.

18 տարեկանը լրանալուց հետո Դուք իրավունք ունեք փոխել Ձեր ՀՀ քաղաքացիությունը, միայն այն դեպքում, եթե չունեք ՀՀ հանդեպ չկատարված պարտավորություն[13]: **Այդ պարտավորություններից մեկն էլ ՀՀ պաշտպանությանը մասնակցելն է (պարտադիր զինվորական ծառայություն անցնելը)**:

Ուշադրությու՛ն

Եթե Դուք 14-18 տարեկան եք, ապա կարող եք կորցնել Ձեր ՀՀ քաղաքացիությունը միայն այն դեպքում, եթե չունեք պետության հանդեպ չկատարված պարտավորություն (օրինակ՝ պարտադիր զինվորական ծառայություն անցնելը):

Մինչև Ձեր 14 տարին լրանալը, եթե Ձեր ծնողները կորցրել են ՀՀ քաղաքացիությունը, դուք ինքնըստինքյան կորցնում եք ձեր ՀՀ քաղաքացիությունը:

Եթե Ձեր ծնողներից մեկը կորցրել է ՀՀ քաղաքացիությունը, իսկ մյուսը ՀՀ քաղաքացի է, ապա Դուք կորցնում եք ՀՀ քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե Դուք բնակվում եք ՀՀ-ից դուրս, և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

[13] «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված

Ուշադրություն՛

ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելը կամ այլ պետության քաղաքացիություն ընդունելն ինքնին չի հանգեցնում ՀՀ քաղաքացիությունը կորցնելուն:

ՀՀ քաղաքացիությունը դադարեցվում է միայն ՀՀ Նախագահի հրամանագրով: Տվյալ դեպքում քաղաքացին քաղաքացիության դադարեցման մասին դիմումը անձամբ ներկայացնում է՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, իսկ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դեսպանություններ և հյուպատոսական հիմնարկներ: Քաղաքացիությունը դադարեցնելու համար ներկայացվող դիմումին կից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանվում է օրենքով:[1]

2. Զորակոչիկների իրավունքները և պարտականությունները զորակոչի ընթացքում

Եթե 18 տարեկան եք՝ Դուք ենթակա եք **զորակոչման**[14]**:**

Զորակոչի ենթակա են 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 27 տարին լրանալը, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցած ու պահեստազորի սպայական կազմ որակավորված արական սեռի քաղաքացիները՝ մինչև 35 տարին լրանալը: Հայտարարված զորակոչին պարտադիր զինվորական ծառայության ենթակա են նաև այն քաղաքացիները և պահեստազորի սպայական կազմը, որոնց համապատասխանաբար 27 և (կամ) 35 տարին լրանում է տվյալ զորակոչի ընթացքում:

Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ **տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ:**

Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ **տարվա ընթացքում ոչ պակաս, քան մեկ անգամ:**

Դուք պարտավոր եք.

Ծանուցագրում նշված ժամկետում **ներկայանալ** այն զինվորական կոմիսարիատ, որտեղ հաշվառված եք:

---

[14] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված

Դուք իրավունք ունեք.

1. **պահանջել,** որպեսզի հարգվի և պաշտպանվի Ձեր արժանապատվությունը՝ Ձեզ չդիմեն անհարգալից կերպով, չվիրավորեն[15]:
2. զերծ մնալ ցանկացած տեսակի **խտրական դրսևորումներից**, կապված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից[16]:
3. փաստաթղթային **կամ** էլեկտրոնային եղանակով **ծանուցված լինել** զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին[17]:

   Ծանուցագիրում պետք է նշվի զինվորական կոմիսարիատ ներկայանալու ժամկետները և այն պետք է ստանաք **անձամբ**:
4. **ազատվել (բացակայել)** աշխատանքից, կամ **արձակվել** ուսումից՝ զինվորական կոմիսարիատի ծանուցագրում նշված անհրաժեշտ ժամանակով[18]:
5. պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ժամանակ **անցնել առողջական վիճակի հետազոտություն և փորձաքննություն** և անհրաժեշտության դեպքում **անվճար և առաջնահերթ** կարգով բուժում ստանալ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում[19]:

---

[15] ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված

[16] ՀՀ Սահմանադրության 29–րդ հոդված

[17] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մաս

[18] «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մաս

[19] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մաս

Ուշադրություն՝

Թե զինվորական հաշվառման, և թե զորակոչի ժամանակ եթե բժշկական փորձաքննություն անցնելիս ճանաչվել եք բուժման կարիք ունեցող, ապա զինկոմիսարիատի կողմից ուղեգրվում եք (ձեր համաձայնությամբ) համապատասխան բուժհիմնարկ բուժման համար: Բուժման ավարտից հետո զինապարտը ենթարկվում է կրկնակի փորձաքննության տվյալ զինկոմիսարիատի բժշկական հանձնաժոոովում:

6. պարտադիր զինվորական ծառայությունից **ազատվել** օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
7. պարտադիր զինվորական ծառայությունից **ստանալ** տարկետում օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
8. բժշկական փորձաքննություն անցնելուց հետո համապատասխան զինվորական կոմիսարիատից պահանջել առողջական վիճակի հետազոտության արդյունքների, պիտանիության մասին բժիշկ-փորձագետի **եզրակացության օրինակը**[20]:
9. պահանջել, որպեսզի Ձեզ տրամադրվի համապատասխան զինկոմիսարիատի, մարզային կամ հանրապետական զորակոչային հանձնաժողովների կողմից Ձեր վերաբերյալ կայացրած **որոշումների օրինակները**[21]:
10. **բողոքարկել** ձեր վերաբերյալ տեղական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի եզրակացությունները, ինչպես նաև Հանրապետական զորակոչային հանձնաժողովի

[20] Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդված, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված

[21] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մաս

որոշումները ՀՀ պաշտպանության նախարարին կամ դատական կարգով:

Դուք ազատվում եք պարտադիր զինվորական ծառայությունից, եթե

ա) **առողջական վիճակի պատճառով** ճանաչվել եք զինծառայության համար ոչ պիտանի,

բ) 24 տարեկան եք (կամ լրանում է հայտարարված զորակոչի ընթացքում) և Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից առաջին անգամ ճանաչվում եք ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար,

գ) մինչև ՀՀ քաղաքացիություն ընդունելն **օտարերկրյա պետությունների զինված ուժերում նվազագույնը 12 ամիս անցել եք պարտադիր զինվորական ծառայություն, կամ 18 ամիս այլընտրանքային զինվորական ծառայություն**

դ) ունեք **գիտական աստիճան** (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) և զբաղվում եք մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ[22],

ե) ընտանիքի միակ արու զավակն եք և ունեք ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում կամ այլ զորքերում կամ ՀՀ միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր,

զ) **ՀՀ կառավարության որոշմամբ:** Այն դեպքում եթե առկա չէ զինվորական ծառայությունից ազատվելու համար անհրաժեշտ վերը նշված հիմքերից մեկը, քաղաքացին կարող է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից՝ բացառիկ դեպքերում՝ ՀՀ կառավարության որոշմամբ[23]:

---

[22] Այս հիմքով տրամադրված տարկետում կդրամադրվի մինչ 01.01.21 թ.

[23] ՀՀ Կառավարության 16.02.2019 թ. թիվ 89-Ն որոշումը՝ «Քաղաքացուն բացառիկ դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կարգը սահմանելու մասին»

Դուք պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում կարող եք ստանալ[24]

1. ընտանեկան դրության բերումով
2. նպատակային ուսումնառության համար
3. առողջական վիճակի պատճառով
4. ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր հանդիսանալու դեպքում, լիազորությունների ողջ ժամկետում,
5. եթե հանդիսանում եք ՀՀ կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող[25]:

ՀՀ կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող եք նաեւ ստանալ գիտության, կրթության,[26] մշակույթի, արվեստի[27] և սպորտի բնագավառներում[28] նշանակալի նվաճումներ ունենալու դեպքում:

---

[24] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված

[25] Այս հիմքով քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 19 տարին լրանալու օրը:

[26] ՀՀ կառավարության 12.04.2018 թ. թիվ 451-Ն որոշումը՝ Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու, հհ կառավարության 2002 թ. օգոստոսի 29-ի N 1394-ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N 117-ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև ՀՀ կառավարության 2000 թ. հունվարի 13-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

[27] ՀՀ Կառավարության 12.04.2018 թ. թիվ 457-Ն որոշումը՝ «Մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին»

[28] ՀՀ Կառավարության 12.04.2018 թ. թիվ 450-Ն որոշումը՝ «Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին»

Ընտանեկան դրության բերումով տարկետում[29] տրվում է, եթե

1. Դուք ունեք

- **65 տարին լրացած** կամ
- **առաջին խմբի հաշմանդամություն ունեցող** կամ
- **երկրորդ խմբի հաշմանդամություն** (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) **ունեցող** կամ
- **դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ** ճանաչված ծնողներ (միայնակ ծնող[30]), եթե ծնողները (միայնակ ծնողը)՝

ա. չունեն այլ զավակ կամ

բ. ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ

2. Դուք ունեք առանց մոր մեծացող երեխա.
3. Դուք ունեք երկու կամ ավելի երեխա, բացառությամբ որդեգրված երեխաների.
4. Դուք ունեք երկրորդ երեխայով կամ առնվազն զույգ երեխայով վեցամսյա հղիության մեջ գտնվող կին.
5. Դուք ունեք մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի

---

[29] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված

[30] Քաղաքացին համարվում է միայնակ ծնող եթե՝

1) մյուս ծնողը մահացել է կամ դատական կարգով ճանաչվել է մահացած.

2) մյուս ծնողն անհայտ է (օրենքով սահմանված կարգով հայրություն կամ մայրություն չի ճանաչվել) կամ դատական կարգով ճանաչվել է անհայտ բացակայող.

3) մինչև քաղաքացու 18 տարին լրանալն առնվազն հինգ տարի առաջ ծնողներն ամուսնալուծվել են, և ծնողները բնակվում են միմյանցից առանձին.

4) ծնողների ամուսնությունն օրենքով սահմանված կարգով չի գրանցվել, և ծնողները բնակվում են միմյանցից առանձին:

հաշմանդամություն[31] ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ[32]համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է:

6. Եթե Դուք անչափահաս տարիքում օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք առանց ծնողական խնամքի մնացած երեխա և որդեգրվել եք խնամատար հաստատությունից, և ունեք 65 տարին լրացած կամ 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը) չունեն այլ զավակ կամ ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ կամ մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է,

[31] որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով

[32] ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, քույրը, եղբայրը, տատը, պապը, ինչպես նաև խնամակալ կամ հոգաբարձու ճանաչված այլ անձը:

7. Եթե ընտանեկան պայմաններից, ընտանեկան որոշակի իրադրությունից ելնելով գտնում եք չեք կարող զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության, սակայն օրենքով չի նախատեսվում ընտանեկան դրության բերումով տարկետում ստանալու իրավունքը, ապա պետք է դիմում ներկայացնեք ՀՀ պաշտպանության նախարարին և ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով կարող եք ստանալ զինվորական ծառայության իրականացումից տարկետում՝ ընտանեկան դրության բերումով:

Ուշադրությու՛ն

Ընտանեկան դրության բերումով տարկետումը տրվում է **մինչև Ձեր 27 տարեկան** դառնալը: Եթե մինչև 27 տարեկան դառնալը Դուք չեք կորցնում տարկետում ստանալու իրավունքը, ապա խաղաղ ժամանակ ազատվում եք պարտադիր զինվորական ծառայությունից և հաշվառվում պահեստազորում:

Նպատակային ուսումնառության համար տարկետում[33] տրվում է, եթե.

1) Դուք ՀՀ-ում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող եք, Դուք ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքում եք քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր՝ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության նշած վայրում և

[33] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մաս

պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին: Սույն կետի համաձայն՝ Ձեզ տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան Ձեր 26 տարին լրանալու օրը.

2) Դուք ՀՀ հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող եք: Սույն կետի համաձայն՝ Ձեզ տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան Ձեր 19 տարին լրանալու օրը:

Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանվում են ՀՀ կառավարության 12.04.2018 թ. թիվ 430-Ն որոշմամբ:

Ուշադրությու՛ն

Եթե Դուք մինչև 2017 թ. դեկտեմբերի 16-ը ասպիրանտուրայում կամ դատական դպրոցում ուսումը շարունակելու համար ստացել եք տարկետում, ապա պարտադիր զինվորական ծառայության կկանչվեք Ձեր տարկետման ժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ քան 2021 թվականի հունվարի 1-ը:

Առողջական վիճակի պատճառով տարկետումը[34] տրվում է, եթե

ա) Դուք առողջական վիճակի պատճառով ունեք **բուժման կարիք**

Տարկետում տրվում է՝

- 3 անգամ, յուրաքանչյուր անգամ **մինչև մեկ տարի** ժամկետով, իսկ երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո կամ **ճանաչվում եք պիտանի զինվորական ծառայության համար և**

[34] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված

զորակոչվում զինվորական ծառայության կամ **ճանաչվում եք զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից**

բ) առողջական վիճակի պատճառով ճանաչվել եք **ժամանակավորապես ոչ պիտանի:**

Առողջական վիճակի պատճառով ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելիս ստանում եք տարկետում՝

- 1 անգամ **երեք տարի** ժամանակով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո ենթարկվելով բժշկական հետազոտության կամ **ճանաչվում եք պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում զինվորական ծառայության կամ ճանաչվում եք զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից և հաշվառվում պահեստազորում:**

Ուշադրություն՝

Եթե դուք ազատվել եք պարտադիր զինվորական ծառայությունից և հաշվառվել եք պահեստազորում, ապա մինչ 27 տարին լրանալը դուք 5 տարին մեկ անգամ ենթակա եք վերափորձաքննության: Վերափորձաքննության արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար պիտանի զինվորական ծառայության համար կամ սահմանափակումով պիտանի ճանաչված քաղաքացին ենթակա է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի՝ ընդհանուր հիմունքներով:

3. Զինծառայողների իրավունքները և պարտականությունները զինծառայության ընթացքում

Զինվորական ծառայությունը ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության տեսակ է: ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս

Եթե Դուք ճանաչվել եք

- պիտանի զինվորական ծառայության համար
- պիտանի զինվորական ծառայության համար՝ սահմանափակումներով

Դուք իրավունք ունեք.

1. պարտադիր զինվորական ծառայության զորակոչված եղբայր ունենալու դեպքում՝ Ձեր ցանկությամբ զինվորական ծառայության անցնել նույն զորամասում, եթե եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 17 ամիսը կամ եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է անցնում

այնպիսի զորամասում, որտեղ ծառայություն անցնելու համար անհրաժեշտ պայմանները չեն բավարարվում զորակոչվող եղբոր կողմից:

2. չընդգրկվել մարտական հերթապահության մեջ, եթե

ա. հանդիսանում եք

- 63 տարին լրացած կամ
- 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ
- 2-րդ խմբի հաշմանդամություն (եթե սահմանված չէ ինքնասպասարկման ապահովման ունակության 2-րդ աստիճանի կենսագործունեության սահմանափակում) ունեցող ծնողների (միայնակ ծնողի) միակ զավակը,

բ. ունեք ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ-ում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր),

գ. ամուսնացած եք և ունեք մեկ երեխա,

դ. ձեր ծնողները մահացած են,

ե. Ձեր մեկ ծնողը մահացած է և ձեր ընտանիքի միակ զավակն եք, կամ ընտանիքի մյուս զավակներն անչափահաս են, կամ ընտանիքի մյուս զավակները չափահաս են և ունեն հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել են անգործունակ:

Եթե Դուք զորակոչվել եք ՀՀ զինված ուժեր, ապա անցնում եք զինվորական ծառայության

Զինվորական ծառայության տեսակներն են
1) ժամկետային.
2) պահեստազորային.
3) զորահավաքային

1. Ժամկետային զինվորական ծառայություն

Պարտադիր զինվորական ծառայություն

Պարտադիր զինվորական ծառայությունը ՀՀ քաղաքացիների կողմից ՀՀ պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության իրականացման հիմնական ձևն է: Պարտադիր զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում և այլ զորքերում զորակոչի միջոցով կազմակերպվող ծառայությունը: Շարքային և պահեստազորի սպայական կազմի համար՝ 24 ամիս, ՀՀ ՊՆ կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնած և ՀՀ ՊՆ-ի հետ պայմանագիր կնքած պարտադիր զինծառայողների համար՝ 36 ամիս:

Պայմանագրային զինվորական ծառայություն

Պայմանագրային զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում և այլ զորքերում պայմանագրի հիման վրա կազմակերպվող ծառայությունը: Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագրերը կնքվում են 3-12 ամիս, կամ 2, կամ 3 կամ 4 կամ 5 տարի ժամկետով, իսկ ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների հետ՝ տվյալ ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառության և հետուսումնական 10 տարի ժամկետով, որը պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասով ներառում է նաև ուսումնառության ժամանակահատվածը՝ որպես պարտադիր զինվորական ծառայություն:

2. **Պահեստազորային զինվորական ծառայություն** է համարվում պահեստազորի պատրաստության շրջանակներում օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպված վարժական հավաքների ժամանակ իրականացվող ծառայությունը:

Պահեստազորային զինվորական ծառայության շրջանակներում իրականացվում է

վարժական հավաքներ (հայտարարվում են ՀՀ կառավարության որոշմամբ):
Պարտադիր զինվորական ծառայությունից արձակված և պահեստազորում հաշվառված պահեստազորայինները կարող են վարժական հավաքի կանչվել զինվորական ծառայությունից արձակվելուց հետո՝ մեկ տարուց ոչ շուտ:
Վարժական հավաքի ընթացքում դուք համարվում եք զինծառայող:
Կարևոր**!!! վարժական հավաքից խուսափելը կամ վարժական հավաքի ընթացքում զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:**

զինվորական վարժանքներ կամ զորավարժություններ (հրամանատարաշտաբայի ն կամ շտաբային, զինվորական մարզումներ) զորավարժություններ, որոնք հայտարարվում են ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով):

պատերազմական ժամանակ գործող հաստիքներին կցագրված քաղաքացիներին պայմանագրային հիմունքներով հաստիքով նախատեսված պարտականությունների կատարման մեջ ներգրավում, որի կազմակերպման կարգը սահմանվում է ՀՀ կառավարության որոշմամբ:

3. **Զորահավաքային զինվորական ծառայություն** է համարվում օրենքով սահմանված դեպքերում հայտարարված զորահավաքի շրջանակներում զորահավաքային զորակոչի հիման վրա կազմակերպվող ծառայությունը:

Այլընտրանքային ծառայություն

Այլընտրանքային **զինվորական** ծառայություն

կարող է անցնել ՀՀ այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ **համոզմունքներին հակասում են միայն զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը**:

Այլընտրանքային **աշխատանքային** ծառայություն

կարող է անցնել ՀՀ այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ **համոզմունքներին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը**:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելիս Ձեր **ծառայության վայրի նշանակումը** իրականացվում է **վիճակահանությամբ՝** ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով: Ծառայության վայրեր նշանակելիս հաշվի են առնվում ստացած կրթությունը, զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը, օրենքով սահմանված այլ պայմաններ:[35]

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում տարածքային զինվորական կոմիսարիատները «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիներին ներկայացնում են Հանրապետական հավաքակայան: Հանրապետական հավաքակայանում զորակոչված զինծառայողներին օրենքի և սույն հրամանի պահանջների համաձայն նախորոշված ծառայության վայրեր տեղափոխելու աշխատանքներն իրականացնում են ռազմական ոստիկանության ներկայացուցիչները և ուղեկցող անձնակազմը:

[35] Վիճակահանության կարգը սահմանվում է ՀՀ պաշտպանության նախարարի 2018 թ. հունիսի 25-ի թիվ 8-Ն հրամանի 1-ին հավելվածի համաձայն:

Եթե նույն օրվա դրությամբ զորակոչվել են երկու եղբայր, և նրանք ցանկություն ունեն ծառայության նշանակվել միևնույն զորամասում, ապա վիճակահանությանը մասնակցում է եղբայրներից միայն մեկը, եթե զորակոչված զինծառայողն ունի շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր, որի ծառայության մեջ գտնվելու ժամկետը չի գերազանցում 17 ամիսը կամ զորակոչված զինծառայողը բավարարում է եղբոր ծառայության վայրի զորամասում ծառայություն անցնելու համար անհրաժեշտ պայմանները, ապա կարող է իր ցանկությամբ ծառայության նշանակվել եղբոր ծառայության վայրի զորամասում՝ չմասնակցելով վիճակահանությանը:

Վիճակահանությանը մասնակցելու նպատակով զորակոչված զինծառայողները ներկայացվում են վիճակահանության դահլիճ, որտեղ հերթով մոտենում են իրենց կարգավիճակին համապատասխանող թմբուկին և վիճակահանության հանձնաժողովի ներկայությամբ թմբուկից հանում վիճակահանության մեկ թերթիկ, բացում և բարձրաձայն կարդում են վիճակահանության թերթիկում նշված զորամասի պայմանական համարը, որից հետո այն տալիս են հանձնաժողովի անդամին: Ստացված վիճակահանության թերթիկի հիման վրա հանձնաժողովի անդամը տվյալ զորակոչված զինծառայողի վիճակահանության թերթիկում գրառում է զորակոչված զորակոչիկի անունը, հայրանունը, ազգանունը և զինկոմիսարիատը, վիճակահանության հանձնաժողովի պատասխանատուն կնքում և ստորագրում է վիճակահանության թերթիկը, որից հետո զորակոչված զինծառայողը ստորագրում է վիճակահանության թերթիկի համապատասխան տողում և դուրս գալիս վիճակահանության դահլիճից:

Վիճակահանության գործընթացը **տեսաձայնագրվում** և պահվում է **էլեկտրոնային կրիչների** վրա:

Վիճակահանությանը **չեն մասնակցում՝**

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած զորակոչված զինծառայողները,

2. ՀՀ պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած զորակոչված զինծառայողները,

3. ռազմաուսումնական հաստատությունների դիմորդները,

4. տվյալ զորակոչի շրջանակներում սպայական կամ սերժանտական դասընթացներ կազմակերպված լինելու դեպքում՝ համապատասխան դասընթացին մասնակցելու դիմում ներկայացրած և համապատասխան դասընթաց անցնելու համար ընտրված զորակոչված զինծառայողները,

5. շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող և եղբոր ծառայության վայրի զորամասում ծառայելու ցանկություն հայտնած զորակոչված զինծառայողները:

Ուշադրությու՛ն

Մինչ զինվորական երդում տալը դուք համարվում եք **նորակոչիկ** և **չեք կարող** ընդգրկվել մարտական հերթապահության կամ ռազմական գործողությունների իրականացման մեջ:[1]

Զինվորական ծառայության սկիզբ է համարվում.

1) պարտադիր զինվորական ծառայության զորակոչված կամ զորահավաքային զորակոչի կամ պահեստազորային զինվորական ծառայության կանչված քաղաքացիների համար՝ ծառայության վայր մեկնելու նպատակով զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը.

2) պայմանագրային զինվորական ծառայության ընդունվող քաղաքացիների համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը.

3) ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների համար՝ տվյալ ռազմաուսումնական հաստատությունում որպես կուրսանտ գրանցվելու օրը:

Զինվորական ծառայությունն ավարտված է համարվում.

Զինվորական ծառայությունն ավարտված է համարվում զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու կապակցությամբ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի և բավարարման (ապահովման) ցուցակներից հանելու օրը:

Պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է.

1. երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելիս,
2. զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը լրանալիս,
3. պայմանագրի ժամկետը լրանալիս,
4. առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելիս,
5. հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման դեպքում, եթե առկա չէ թափուր այլ զինվորական պաշտոն կամ զինծառայողը համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի և չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ,

6. կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու դեպքում, եթե առկա չէ թափուր այլ զինվորական պաշտոն կամ զինծառայողը համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի և չունի օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ,
7. «զինվորական ծառայությունից արձակում» կարգապահական տույժ կիրառելիս,
8. մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագիր ներկայացնելիս, եթե չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ,
9. ռազմաուսումնական հաստատությունից կամ սպայական կամ սերժանտական դասընթացներից կամ ակադեմիական ուսումնառությունից կամ պետական լիազոր մարմնի պատվերով միջին մասնագիտական կամ բարձրագույն կամ հետբուհական ուսումնական հաստատությունից (այսուհետ՝ ուսումնառություն) իր դիմումի համաձայն ազատվելիս կամ անբավարար առաջադիմության կամ անկարգապահության հիմքով հեռացվելիս, եթե չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ.
10. զոհվելու (մահանալու) կամ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու դեպքում:

Ուշադրություն՝

Հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պարտավորություն ունեցող պայմանագրային զինծառայողների համար 1-ին, 5-8-րդ կետերով սահմանված հիմքերով հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում, իսկ 9-րդ կետով սահմանված հիմքով՝ ուսումնառության ընթացքում, պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելիս ծագում է իրավական հետևանք՝ հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության յուրաքանչյուր լրիվ չծառայած տարվա դիմաց ամսական նվազագույն աշխատավարձի 1000000 (մեկ միլիոն) չափով տուժանքի ձևով:

Զինվորական ծառայության ժամկետը հաշվարկելու կարգը.

Զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում ներառվում է զինծառայողի՝ օրենքով սահմանված զինվորական ծառայության մեջ գտնվելու ամբողջ ժամանակահատվածը: Զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը որոշվում է օրացուցային հաշվարկով: Օրենքով կարող է սահմանվել նաև զինվորական ծառայության ժամկետի արտոնյալ հաշվարկ:

Զինծառայողի զինվորական ծառայության ժամկետում չեն հաշվարկվում.

1) ազատազրկման կամ կալանքի ձևով պատիժը կրելու ժամանակահատվածը,

2) ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամանակահատվածը,

3) զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ օրենքով սահմանված կարգով ապացուցված ինքնախեղման կամ դիտավորությամբ իր առողջական վիճակն այլ եղանակով վատթարացրած զինծառայողի բուժման մեջ գտնվելու ժամանակահատվածները՝ անկախ պատճառներից, ինչպես նաև զինծառայողի պահանջով իր առողջական վիճակի կրկնակի հետազոտման մեջ գտնվելու ժամանակահատվածը, եթե հետազոտման արդյունքներով զինծառայողի բուժման անհրաժեշտությունը բացակայում է,

4) ռազմաուսումնական հաստատություններից կարգապահական տույժի կարգով կամ անբավարար առաջադիմության կամ ուսումնառությունից հրաժարվելու համար հեռացված կուրսանտների ուսման կամ Օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասում նշված դեպքում պայմանագրային զինվորական ծառայության ժամանակահատվածը՝ սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում,

5) զինծառայողի կողմից ՀՀ ՊՆ հետ կնքած պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում պայմանագրից հրաժարվելու դեպքում՝ ամսական արձակուրդում գտնվելու օրերը՝ պարտադիր զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում,

6) սույն օրենքի խախտմամբ պայմանագրային զինվորական ծառայություն անցած լինելու ժամանակահատվածը:

Պարտադիր զինծառայության սահմանված ժամկետը լրացվում է բաց թողնված օրացուցային օրերի քանակով՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

Ուշադրությու՛ն

Ազատազրկման կամ կալանքի ձևով պատիժը կրելու ժամանակահատվածը և ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամանակահատվածը հաշվարկվում են զինծառայողի զինվորական ծառայության ժամկետում, եթե զինծառայողն օրենքով սահմանված կարգով ձեռք է բերել արդարացվածի կարգավիճակ:

Որպես զինծառայող Դուք պարտավոր եք[36]՝

1. հավատարիմ լինել զինվորական երդմանը, խստորեն պահպանել ՀՀ Սահմանադրության և օրենքների պահանջները,

[36] «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 5-րդ հոդված «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված

2. Ձեր զինվորական պարտքը և գործառնական պարտականությունները, օրվա կարգացուցակով նախատեսված միջոցառումները կատարել լիարժեք, բարեխղճորեն և արիաբար, պատշաճ ձևով ուսումնասիրել ռազմական գործը, պահպանել ռազմական և պետական գույքը,

3. աննկուն կրել զինվորական ծառայության դժվարությունները, անմնացորդ նվիրվել զինվորական պարտքի կատարմանը,

4. լինել զգոն, խստորեն պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը,

5. պահպանել զինծառայողների միջև կանոնադրային փոխհարաբերությունները, ամրապնդել զորային ընկերականությունը.

6. հարգել հրամանատարներին (պետերին) ու միմյանց, պահպանել զինվորական բարեկրթության և ողջույնի կանոնները,

7. թույլ չտալ զինծառայողի պատիվն արատավորող արարք,

8. հավատարիմ լինել զինվորական երդմանը, անձնուրաց կերպով ծառայել իր ժողովրդին, արիաբար, հմտորեն, չխնայելով սեփական արյունը և նույնիսկ կյանքը, պաշտպանել Հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը, կատարել զինվորական պարտքը, անսասան տանել զինվորական ծառայության դժվարությունները,

9. խստորեն պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ու օրենքները, կատարել զինվորական կանոնադրությունների պահանջները,

10. մշտապես տիրապետել ռազմական մասնագիտական գիտելիքներին, կատարելագործել սեփական իմացությունը և զինվորական վարպետությունը,

11. իմանալ և գործադրման համար մշտապես պատրաստ պահել իրեն հանձնված սպառազինությունը և մարտական տեխնիկան, պահպանել պետական և ռազմական ունեցվածքը,

12. լինել ազնիվ, կարգապահ և խիզախ զինվորական պարտքի կատարման ժամանակ, ցուցաբերել խելամիտ նախաձեռնություն,

13. անվերապահորեն ենթարկվել հրամանատարներին (պետերին) և նրանց պաշտպանել մարտի ժամանակ, պաշտպանել զորամասի մարտական դրոշը,

14. բարձր պահել զինվորական ընկերասիրությունը, չխնայելով կյանքը՝ ընկերներին փրկել վտանգից, նրանց օգնել խոսքով ու գործով, հարգել նրանցից յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը, իր և ուրիշ զինծառայողների նկատմամբ թույլ չտալ կոպտություն և ծաղրուծանակ, նրանց հեռու պահել անարժան արարքներից,

15. պահպանել զինվորական հարգանքի, վարքի և զինվորական ողջույնի կանոնները, մշտապես լինել համազգեստով՝ մաքուր և խնամքով հագնված,

16. լինել աչալուրջ, խստորեն պահպանել պետական և ռազմական գաղտնիքը:

Որպես զինծառայող Դուք իրավունք չունեք՝

1) կատարելու այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Ընդ որում, պետական ծառայությունը գերակայում է սույն կետում նշված աշխատանքի նկատմամբ,

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցնելու ընտրովի կամ այլ պաշտոններ, բացառությամբ սույն օրենքով սահմանված զինվորական պաշտոնների,

3) ստեղծելու կուսակցություններ կամ կրոնական միավորումներ, անդամակցելու որևէ կուսակցության կամ արհեստակցական միության, իսկ կրոնական միավորման անդամ հանդիսանալու դեպքում զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնելու քարոզչական գործունեություն,

4) ոչ ծառայողական նպատակների համար օգտագործելու պետական սեփականություն հանդիսացող նյութական արժեքներ, տեխնիկական, ֆինանսական ու տեղեկատվական միջոցներ,

5) կազմակերպելու գործադուլներ կամ մասնակցել դրանց.

6) պաշտոնական դիրքն օգտագործելու ի շահ կուսակցությունների, կրոնական, հասարակական կազմակերպությունների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության,

7) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.

8) վարձատրություն ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար,

9) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Որպես զինծառայող Դուք իրավունք ունեք.

1. ստանալ պարտադիր զինվորական ծառայության ընթացքում տրվող **հիմնական, լրացուցիչ, հիվանդության պատճառով, ամսական** ինչպես նաև հիմնական, լրացուցիչ, հիվանդության և ամսական արձակուրդ տալու դեպքում լրացուցիչ տրվող արձակուրդի անցկացման վայր մեկնելու և այնտեղից վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակ՝ մինչև 2 օր[37]:

Հիմնական արձակուրդը տրվում է

- մեկ անգամ՝ **ոչ պակաս, քան 5 ամսվա օրացուցային ծառայության դեպքում**, զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից օրացուցային տարվա համար

[37] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված

սահմանված արձակուրդների տրման ժամանակացույցի համաձայն[38]:

Հիմնական արձակուրդի տևողությունը՝

1) շարքային կազմի զինվորական կոչում ունեցող զինծառայողներին՝ 10 օրացուցային օր.

2) կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ունեցող զինծառայողներին՝ 15 օրացուցային օր:

Լրացուցիչ արձակուրդը տրվում է

Շարքային կազմի պարտադիր զինծառայողներին լրացուցիչ արձակուրդ տրվում է 5 օրացուցային օր տևողությամբ՝

1) զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշների համար՝ խրախուսման կարգով.

2) ընտանեկան պայմաններից ելնելով՝ զինծառայողին երեխա ծնվելու կամ նրա ընտանիքի անդամի (կին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) ամուսնության, ծանր հիվանդության կամ մահվան դեպքերում.

3) մարտական հերթապահության մեջ չընդգրկվելու արտոնություն ունեցողներին՝ վեց ամիսը մեկ անգամ:

Ուշադրությու՛ն

Հիմնական կամ լրացուցիչ կամ հերթական արձակուրդի ընթացքում հիվանդացած զինծառայողի հիվանդության ժամանակահատվածը չի հաշվարկվում տրված արձակուրդի ժամկետում:

[38] Արձակուրդների տրման ժամանակացույցը կազմելիս արձակուրդի տրման հերթականությունը որոշվում է՝ հաշվի առնելով զորամասի (զինվորական կառավարման մարմնի) մարտական պատրաստության ապահովման շահերը և զինծառայողի բարեխիղճ ծառայությունը:

Հիվանդության արձակուրդը տրվում է

Հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տրվում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից՝ բուժման մեջ գտնվելու կամ վերականգնողական ժամանակահատվածի համար՝ բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատության կամ ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի (այսուհետ՝ ԿՌԲՀ) տեղեկանքի հիման վրա:

Առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով զինվորական ծառայությունից արձակելու ժամանակ բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատության պետի կողմից զինծառայողին կարող է տրվել արձակուրդ մինչև 30 օրացուցային օր տևողությամբ՝ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Հիվանդության պատճառով բուժման և հիվանդության պատճառով բուժական (վերականգնողական) արձակուրդում անընդմեջ գտնվելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել 120 օրը՝ զորամասից ուղեգրվելու օրվանից հաշված: Զինծառայողներին, ունկնդիրներին հիվանդության պատճառով բուժական (վերականգնողական) արձակուրդ տրամադրվում է մինչև 30 օր ժամկետով: Արձակուրդի տևողությունը ՌԲՀ-ն եզրակացություն է կայացնում անհատապես՝ ըստ բժշկական ցուցումների: Առանձին դեպքերում արձակուրդի տևողությունը ԿՌԲՀ-ն կարող է երկարացնել՝ ընդհանուր տևողությունը չգերազանցելով 60 օրը: Արձակուրդը դիտվում է որպես բուժման կուրսի համապատասխան մաս:

Զորամասի բուժկետներում զինծառայողի բուժման ժամկետը սահմանվում է մինչև 7 օր, որը կարող է երկարաձվել ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության պետի թույլտվությամբ՝ առանձին դեպքերում, ելնելով սանիտարահամաճարակային իրավիճակից:

Առանձին բժշկական ջակատներում զինծառայողների բուժման ժամկետը սահմանվում է մինչև 15 օր, որը հոսպիտալի ռազմաբժշկական հանձնաժողովի որոշմամբ ևս 15 օրով կարող է ավելացվել:

Կայազորային (բացառությամբ Երևանի կայազորային հոսպիտալի) և կենտրոնական զինվորական հոսպիտալներում բուժման ժամկետը սահմանված է մինչև 30 օր:

Կենտրոնական կլինիկական զինվորական և Երևանի կայազորային հոսպիտալներում բուժման ժամկետը սահմանվում է մինչև 30 օր, որը առանձին դեպքերում ռազմաբժշկական հանձնաժողովների որոշմամբ կարող է երկարաձիվել:

Եթե ավարտվում է բուժման կամ հիվանդության պատճառով տրված արձակուրդի անընդմեջ ժամկետը, ապա իրականացվում է ռազմաբժշկական հանձնաժողովի հետազոտում՝ զինվորական ծառայությանը պիտանիությունը որոշելու համար:

Ուշադրությու՛ն

Հիվանդությունների հետևանքով ծանր վիճակում հայտնված զինծառայողների հոսպիտալացման վերաբերյալ համապատասխան զինվորական կոմիսարիատը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել զինծառայողի ծնողներին և հարազատներին:

Ամսական արձակուրդ տրվում է

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության հետ պամանագիր կնքած շարքային կազմի պարտադիր զինծառայողներին՝

ծառայության վեց ամիսը լրանալուց հետո՝ յուրաքանչյուր ամսվա ընթացքում **7 օրացուցային օր** ժամկետով:

2. ստանալ **դրամական ապահովություն** «Զինվորական ծառայության և զինվորական կարգավիճակի մասին» օրենքով և ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով և չափով:[39]

Փոխհատուցվում են արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդից վերադառնալիս զինծառայողի, ինչպես նաև զինծառայողին ուղեկցող ընտանիքի անդամի տրանսպորտի ծախսերը հետևյալ չափերով՝

- մինչև 30 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 600 դրամ,
- 30-60 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 1000 դրամ,
- 60-100 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 1200 դրամ,
- 100-150 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 2000 դրամ,
- 150-200 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 2400 դրամ,
- 200-250 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 3000 դրամ,
- 250-300 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 6000 դրամ,
- 300-350 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 8000 դրամ,
- 350 և ավելի կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 10000 դրամ:

Զինծառայողներին ուղեկցող ընտանիքի անդամներից յուրաքանչյուրին փոխհատուցում տրվում է վերը նշված սահմանված գումարների 50 տոկոսի չափով:

3. օգտվել Ձեր և Ձեր ընտանիքի անդամների[40] համար **անվճար որակյալ բժշկական օգնությունից և անվճար առողջարանային բուժման իրավունքից:**

---

[39] Արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդի անցկացման վայրից վերադառնալիս զինծառայողի տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու կարգը և պայմանները սահմանվում է ՀՀ կառավարության 18.08.2018 թ. թիվ 898-Ն որոշմամբ

[40] զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում՝

1) ամուսինը (կինը) և 18 տարին չլրացած երեխաները.

Բժշկական օգնությունը տրամադրվում է՝

- համապատասխան գերատեսչական բժշկական հիմնարկներում,
- այլ բժշկական հաստատություններում զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները բժշկական օգնություն և սպասարկում ստանում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. օգտվել ՀՀ տարածքում քաղաքային **ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից՝ անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից),** անվճար երթևեկելու իրավունքից:

Փոխհատուցվում են նաև զինծառայողի ամուսնու (կնոջ) և 18 տարին չլրացած երեխաների՝ զինծառայողի հետ արձակուրդի անցկացման վայր մեկնելու և արձակուրդի վայրից վերադառնալու տրանսպորտային ծախսերը:[41]

5. օգտվել **կրթություն ստանալու** երաշխիքներից[42]: Պետությունը երաշխավորում է ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք

---

2) անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող զավակները, եթե հաշմանդամություն ունեցող են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը.

3) ծնողները.

4) զինծառայողի, նախկին զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող՝ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Քույրը և եղբայրը համարվում են զինծառայողի, նախկին զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող, եթե օրենքով սահմանված կարգով սահմանվել է խնամակալություն, և նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:

[41] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 66-րդ հոդված

[42] « Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 67-րդ հոդված

ունեցող նախկին զինծառայողների, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակների ընդունելությունը ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված ՀՀ-ում հավատարմագրված ուսումնական հաստատություններ՝ ընդհանուր մրցույթից դուրս, առանձին մրցույթով, քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում, ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

6. օգտվել **կենսաթոշակային ապահովության**[43] իրավունքից, մասնավորապես՝ օգտվել հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքից:

Կենսաթոշակը նշանակվում է ԲՍՓ իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված զինծառայողին, եթե նա հաշմանդամ է ճանաչվել զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո ԲՍՓ իրականացնող իրավասու պետական մարմինը սահմանել է (որոշել է) զինվորական ծառայության հետ հաշմանդամության (հիվանդության, խեղման, վնասվածքի) պատճառական կապ[44]:

7. **խրախուսվել** ծառայության մեջ աչքի ընկնելու և ծառայողական պարտականությունները ջանասիրաբար կատարելու, անձնական հատուկ վաստակի և դրական նախաձեռնություն ցուցաբերելու համար[45]:

8. եթե Ձեր նկատմամբ նշանակված է **ծառայողական քննություն**՝ ծառայողական քննության անցկացման ժամանակ ծանոթանալու Ձեր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված փաստաթղթերին և դրանց կապակցությամբ ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, ինչպես նաև մինչև ծառայողական քննության ավարտը ծանոթանալու ծառայողական քննության նյութերին, ծառայողական քննության արդյունքներով

---

[43] « Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 70-րդ հոդված

[44] «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված

[45] «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 2-րդ գլուխ

կազմված եզրակացությանը, սույն օրենքով սահմանված կարգով այն բողոքարկելու[46]:

9. Ձեր նկատմամբ կիրառված **կարգապահական տույժը բողոքարկելու ըստ վերադասության[47]՝** տույժի մասին Ձեզ հայտարարվելու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում[48] կամ երկամսյա ժամկետում՝ դատական կարգով:

10. **ներկայացնելու զեկուցագիր** զինվորական ծառայության անցման հետ կապված հարցերով Ձեր անմիջական հրամանատարին (պետին), զինծառայողին տրվող բանավոր կամ գրավոր հրամանների կամ ցուցումների հրամաններ կամ ցուցումներ տվողի կամ դրանք կատարողի լիազորությունների սահմանների վերազանցման դեպքերում, ինչպես նաև Ձեր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը բողոքարկելու կամ այլ զինծառայողների կողմից անօրինական ու անարդար գործողություններ կատարելու մասին վերադաս հրամանատարներին (պետերին): Ինչպես նաև գրավոր կերպով տեղեկանալ զեկուցագրում ներկայացված հարցերի լուծման պատճառների վերաբերյալ և մերժումը բողոքարկելու վերաբերյալ[49]:

Զեկուցագրում պարտադիր պետք է նշել առաջարկվող կամ բողոքարկվող հարցի էությունը, այն հրամանատարի (պետի) կամ այլ զինծառայողի տվյալները, որոնց գործողությունները կամ անգործությունը բողոքարկվում են, ինչպես նաև զեկուցագիր ներկայացնող զինծառայողի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, զինվորական կոչումը, բնակության (ուսման) վայրը:

Սակայն՝

---

[46] «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մաս

[47] «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 9-րդ մաս

[48] «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 9-րդ մաս

[49] «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 47-րդ հոդված

Իրավունք չունեք զեկուցագիր ներկայացնելու մարտական հերթապահության մեջ, շարքում, պահակախմբում, օրվա վերակարգում կամ ուսումնական պարապմունքներում գտնվելու ժամանակ, բացառությամբ այն դեպքերի, երբ զինծառայողին տրվում է նպատակային հարց:

Եթե հրամանատարի (պետի) իրավասությունների մեջ չի մտնում զեկուցագրում նշված հարցերի լուծումը, ապա նա **3-օրյա** ժամկետում զեկուցագիրն ուղարկում է վերադաս կամ դրանք լուծելու իրավասություն ունեցող հրամանատարին (պետին)՝ այդ մասին տեղյակ պահելով զեկուցողին: Զեկուցագիրը չի կարող ուղարկվել այն հրամանատարի (պետի) քննարկմանն ու կարծիքին, որի գործողությունները կամ անգործությունը բողոքարկվում են զեկուցագրում:

Զեկուցագրի մասին որոշումներն ընդունվում են անհապաղ, բայց ոչ ուշ, քան **15-օրյա ժամկետում**, իսկ լրացուցիչ ուսումնասիրություն պահանջող զեկուցագրի մասին որոշումն ընդունվում է **մինչև 30 օր ժամկետում՝** լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության մասին տեղեկացնելով զեկուցագիր ներկայացնողին:

4. Տեղեկատվություն սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների համար

Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը դեռևս գործում էր օրենսդրական այն իրավակարգավորումը, համաձայն որի այն քաղաքացիները, որոնց հանդեպ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու հիմքով հարուցված էր քրեական հետապնդում, կարող են օրենքով սահմանված չափով և կարգով ՀՀ պետական բյուջե գումար վճարելով ազատվել քրեական պատասխանատվությունից և կանգնել զինվորական հաշվառման:

«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքը տարածվում էր օրենսդրության խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության չզորակոչված (զորակոչից խուսափած) ու 27 (պահեստազորի սպաների դեպքում՝ 35) տարին լրացած կամ մինչև 27 (35) տարին լրանալը օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքեր ձեռք բերած այն քաղաքացիների վրա, որոնց նկատմամբ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու հիմքով հարուցված էր քրեական հետապնդում:

Նշված օրենքի համաձայն՝ սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանացած որոշակի խումբ անձանց հնարավորություն էր տրված օրենքով սահմանված չափով և կարգով ՀՀ պետական բյուջե գումար վճարելով չենթարկվել քրեական պատասխանատվության և կանգնել զինվորական հաշվառման:

ՀՀ ԱԺ կողմից «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» օրենքի գործողության ժամկետը պարբերաբար երկարացվում էր: Այդ նպատակով կատարված վերջին օրենսդրական փոփոխությամբ՝ ԱԺ-ի կողմից ընդունված 2019 թվականի մարտի 6-ին, օրենքը տարածվում էր այն

անձանց վրա, որոնց 27 (պահեստազորի սպաները՝ 35) տարին լրացել էր մինչև 2019 թվականի մարտի 1-ը, իսկ օրենքի գործողության ժամկետ էր սահմանվել մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը։

Նշված օրենքի գործողության ժամկետը երկարաձգելու մասին նոր օրենք չի ընդունվել, ուստի ներկայումս վերոնշյալ կարգն այլևս չի գործում և սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները չեն կարող այդ հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից։

Հավելված Ա
Զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացման մեխանիզմները

Կիրառելի օրենսդրություն

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք, ընդունված 2017 թվականի նոյեմբերի 15-ին /հետայսու՝ Օրենք/:

ՀՀ Կառավարության 12.04.2018թ. «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 405-Ն որոշումը:

ՀՀ կառավարության 12.04.2018թ. «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» թիվ 404-Ն որոշումը:

Օրենսդրական կարգավորումները

Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու ժամանակ իրականացվում են նրանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն:

Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, հիվանդությունների ցանկը, որոնց առկայության դեպքում որոշվում է քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը զինվորական ծառայության համար, ինչպես նաև զինվորական ծառայության պայմանները, որոնք հակացուցված են քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին, սահմանում են ՀՀ կառավարությունը թիվ 404-Ն և 405-Ն որոշումների միջոցով:

Քաղաքացու բժշկական փորձաքննության արդյունքներով տրվում է քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Եզրակացությունն առնվազն ներառում է քաղաքացու առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, քաղաքացու պիտանիության աստիճանը զինվորական ծառայությանը, նրա առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները, եզրակացության բողոքարկման կարգն ու ժամկետները:

Քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ, կախված զինվորական ծառայությանը քաղաքացու պիտանիության աստիճանից և բժշկական փորձաքննության նպատակից, նշվում են՝

1) նախազորակոչային և զորակոչայի տարիքի քաղաքացիների համար՝

ա. պիտանի է զինվորական ծառայության համար,

բ. պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,

գ. սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար,

դ. ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,

ե. ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,

զ. ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,

է. կարիք ունի բուժման,

2) Պահեստազորայինների համար՝

ա. պիտանի է զինվորական ծառայության համար,

բ. սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար,

գ. ենթակա է կանչվելու վարժական հավաքի.

դ. ենթակա չէ կանչվելու վարժական հավաքի:

3)ՌՈՒՀ-եր ընդունվողների համար՝

ա. պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,

բ. ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար:

4) Զինծառայողների համար՝

ա. պիտանի է զինվորական ծառայության համար,

բ. պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,

գ. սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար,

դ. կարիք ունի ծառայողական պարտականություններից մասնակի ազատման՝ մինչև 15 օր ժամկետով կամ արձակուրդ հիվանդության պատճառով (վերականգնողական),

ե. ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,
զ. ոչ պիտանի է զինվորական ծառայության համար:

Առողջական վիճակի պատճառով զորակոչիկները կարող են տարկետում ստանալ երկու դեպքում՝
1. Առաջին դեպքում զորակոչիկը տարկետում է ստանում պարտադիր բուժման կարիք ունենալու դեպքում,
2. Երկրորդ դեպքում զորակոչիկը ճանաչվում է ժամանակավորապես ոչ պիտանի:

1. Բուժման համար տարկետում անձը կարող է ստանալ 3 անգամ, մինչև 1 տարի ժամկետով /տե՛ս գծապատկեր 1./: Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո զորակոչիկը կրկին անցնում է բժշկական հետազոտում, որի արդյունքում կարող են կայացվել հետևյալ որոշումներից մեկը՝

ա. ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է զինվորական ծառայության

բ. ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստազորում



Գծապատկեր 1. Պարտադիր բուժման կարիք ունենալու նպատակով տարկետում ստանալու ընթացակարգը

2. Ժամանակավորապես ոչ պիտանի զորակոչիկներին զորակոչից տարկետում տրվում է 1 անգամ՝ 3 տարի ժամանակով /Տե՛ս Գծապատրկեր 2./: Տարկետման ժամկետը լրանալուց հետո զորակոչիկը կրկին անցնում է բժշկական քննություն, որի արդյունքում կայացվում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա. ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է զինվորական ծառայության

բ. ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստազորում



Գծապատկեր 2. Ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչելու դեպքում տարկետում ստանալու ընթացակարգը

Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունենալու հիմքով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված զորակոչիկները, զորակոչից տարկետում ստացած քաղաքացիները, ովքեր հաշվառվել են պահեստազորում ենթակա են բժշկական վերափորձաքննության՝ 5 տարին մեկ անգամ: Եթե մինչև 27 տարեկան լրանալը քաղաքացին բժշկական վերափորձաքննության արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար ճանաչվում է պիտանի, ապա նա ենթակա է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի՝ ընդհանուր հիմունքներով:

Պարտադիր զինվորական ծառայությունից ազատված՝ պահեստազորի սպայական կազմում հաշվառված քաղաքացին մինչև 35 տարին լրանալը ենթակա է բժշկական վերափորձաքննության՝ **5 տարին մեկ անգամ:** Բժշկական վերափորձաքննության արդյունքներով պիտանի զինվորական ծառայության համար կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար ճանաչված՝ պահեստազորի սպայական կազմում հաշվառված քաղաքացին ենթակա է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի՝ ընդհանուր հիմունքներով:

Ներգրավված մարմինները և նրանց գործառույթները

Ըստ Օրենքի 25-րդ հոդվածի՝ պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչի կազմակերպման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվում են՝

1. Մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովներ: Յուրաքանչյուր հանձնաժողովի նախագահ է համարվում համապատասխան մարզպետը (Երևանի քաղաքապետը):

2. Հանրապետական զորակոչային հանձնաժողովը, որի նախագահը ՀՀ պաշտպանության նախարարն է:

Պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչերի պատշաճ իրականացման համար պատասխանատու է համապատասխան զինվորական կոմիսարիատը, որի շրջանակներում զինվորական կոմիսարը

1) կազմակերպում է զորակոչերի ենթակա քաղաքացիների առողջական վիճակի նախնական և անհրաժեշտ այլ հետազոտությունների ուղեգրման գործընթացը,[50]

2) որոշում է կայացնում պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք չունեցող շարքային կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու մասին.

3) նախապատրաստում և նախնական եզրակացությամբ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով է ներկայացնում պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու որոշ հիմքերի, նպատակային ուսումնառության համար տարկետում տալու, ընտանեկան պայմաններից ելնելով պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու դեպքերի հանգամանքները, ինչպես նաև գիտական աստիճան ունենալու և մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ փաստաթղթերը,[51]

Մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովը

1) եզրակացություն է ներկայացնում ՀՀ պաշտպանության նախարարին՝

[50] Այս դեպքում զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի հետազոտության արդյունքում տրված եզրակացության հիման վրա զինվորական հաշվառման, ինչպես նաև զորակոչի ենթակա անձինք համապատասխան զինվորական կոմիսարի կողմից տրված ուղեգրի հիման վրա հետազոտություններ են անցնում համապատասխան բուժհիմնարկներում:

[51] Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մաս

ա. մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս այլընտրանքային ծառայություն անցնելու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու, ինչպես նաև գիտական աստիճան ունենալու և մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ զբաղվելու հիմքով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին,

բ. Նպատակային ուսումնառության, ինչպես նաև ՀՀ ԱԺ պատգապավոր ընտրված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին,ինչպես նաև ընտանեկան դրության բերումով զինվորական ծառայության հայտարարված զորակոչից տարկետում տալու մասին.

2) առաջարկություն է ներկայացնում հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ օրենքով չնախատեսված դեպքերում ընտանեկան դրության բերումով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ կամ մերժում է նշված հիմքով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ քաղաքացու դիմումը:

Հանրապետական զորակոչային հանձնաժողովը

- համակարգում և վերահսկում է մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի, ինչպես նաև իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեությունը.
- եզրակացություն է ներկայացնում առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու, առողջական վիճակի պատճառով օրենքով սահմանված կարգով բուժման նպատակով տարկետում տալուց և ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչելուց հետո զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ

• պարտադիր զինվորական ծառայության զորակոչից քաղաքացուն բուժման կարիք ունենալու համար կամ զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչելու դեպքերում նախատեսված ժամկետներում քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին,

• եզրակացություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ օրենքով չնախատեսված դեպքերով ընտանեկան դրության բերումով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու նպատակահարմարության վերաբերյալ,

• քննարկում է մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի, ինչպես նաև իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեության կամ կայացրած որոշումների (տրված եզրակացությունների) վերաբերյալ ներկայացված բողոքները:

Տարածքային զինվորական կոմիսարիատի, մարզային զորակոչային հանձնաժողովի ինչպես նաև հանրապետական զորակոչային հանձնաժողովի ձեր վերաբերյալ կայացված որոշումների հետ համաձայն չլինելու պարագայում կարող եք այն բողոքարկել վերադասության[52] և/կամ դատական կարգով:

Ձեր վերաբերյալ հանրապետական կամ մարզային զորակոչային հանձնաժողովների, ինչպես նաև տարածքային զինվորական կոմիսարիատի կամ իրավասու բժշկական հանձնաժողովների որոշումները պետք է այն կայացվելուց հետո եռօրյա ժամկետում հանձնվեն Ձեզ կամ Ձեր օրինական ներկայացուցչին:

---

[52] Տարածքային զինվորական կոմիսարիատի, մարզային զորակոչային հանձնաժողովի որոշումները, ինչպես նաև Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշումները/եզրակացությունները վերադասության կարգով բողոքարկվում են Հանրապետական զորակոչային հանձնաժողովին: Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի որոշումները վերադասության կարգով բողոքարկվում են ՀՀ Պաշտպանության նախարարին:

Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, հիվանդությունների ցանկը, որոնց առկայության դեպքում որոշվում է քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը զինվորական ծառայության համար, ինչպես նաև զինվորական ծառայության պայմանները, որոնք հակացուցված են քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին, սահմանում է ՀՀ կառավարությունը:

Այսպես, ՀՀ կառավարության թիվ 405-Ն որոշմամբ՝ քաղաքացու (զինվորական հաշվառման ենթակա անձանց, զորակոչիկների, պահեստազորում հաշվառված անձնանց) բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն են՝

- Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունները (նախազորակոչային տարիքի անձանց համար)
- Զինկոմիսարատներին կից բժշկական հանձնաժողովներ
- Կենտրոնական բժշկական հանձնաժողովը

Պահեստազորում հաշվառված զինապարտների դեպքում բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն են՝

- Զինկոմիսարատներին կից բժշկական հանձնաժողովները
- Կենտրոնական բժշկական հանձնաժողովը

Ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն են՝

- հոսպիտալային կամ առանձին բժշկական ջոկատի ռազմաբժշկական հանձնաժողովը (արտահաստիքային),
- ՀՀ ՊՆ կենտրոնական պոլիկլինիկայի ռազմաբժշկական հանձնաժողովը (արտահաստիքային),

- ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը (հաստիքային),
- ՌՈՒՀ-երի ընդունելության ռազմաբժշկական հանձնաժողովը (արտահաստիքային՝ գործում է ընդունելության ժամանակ):

Առողջական վիճակի փորձաքննության արդյունքների հիման վրա կայացվում են հետևյալ եզրակացությունները.

1) նախազորակոչային և զորակոչայի տարիքի քաղաքացիների համար՝

ա. պիտանի է զինվորական ծառայության համար,

բ. պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,

գ. սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար,

դ. ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,

ե. ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,

զ. ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,

է. կարիք ունի բուժման,

2) Պահեստազորայինների համար՝

ա. պիտանի է զինվորական ծառայության համար,

բ. սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար,

գ. ենթակա է կանչվելու վարժական հավաքի.

դ. ենթակա չէ կանչվելու վարժական հավաքի:

3) ՌՈՒՀ-եր ընդունվողների համար՝

ա. պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,

բ. ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար:

4) Զինծառայողների համար՝

ա. պիտանի է զինվորական ծառայության համար,

բ. պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,

գ. սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար,

դ. կարիք ունի ծառայողական պարտականություններից մասնակի ազատման՝ մինչև 15 օր ժամկետով կամ արձակուրդ հիվանդության պատճառով (վերականգնողական),
ե. ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,
զ. ոչ պիտանի է զինվորական ծառայության համար:

Ուշադրությու՛ն

Այն զորակոչիկները, որոնք հայտարարված զորակոչի ընթացքում հետազոտությունների արդյունքում ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով **5 և ավելի** տարբեր հիվանդություններով, ճանաչվում են բուժման կարիք ունեցող և նրանց տրվում է տարկետում մինչև մեկ տարի ժամկետով՝ բուժման նպատակով:

Ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդությունների արդյունքում, ԿՌԲՀ որոշմամբ **5 և ավելի** հոդվածներով սահմանափակում ունեցող ժամկետային պարտադիր ծառայության շարքային կազմի զինծառայողները ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով:

Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովները, համապատասխան զինվորական կոմիսարի առաջարկությամբ և մարզպետների (Երևանի քաղաքապետի) ներկայացմամբ, կազմավորվում են ՀՀ առողջապահության նախարարի հրամանով՝ մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 20-ը: ԶԲՀ-ների կազմում ընդգրկվում են թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, օտոլարինգոլոգ, մաշկաբան և բուժքույր-քարտուղար:

Որպես զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացման վերաբերելի զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների գործառույթներն են՝

1) զինապարտներին փորձաքննության ենթարկել կցագրման, զորակոչի, վարժական հավաքների, ինչպես նաև զինված ուժերի համար մասնագետների պատրաստության և ՌՈՒՀ-երի թեկնածուների ընտրության ժամանակ,

2) փորձաքննության ենթարկել պահեստազորում հաշվառված զինապարտներին,

3) զինապարտների պիտանիության վերաբերյալ կայացնել եզրակացություն.

4) ամփոփել փորձաքննության արդյունքները և այդ մասին հայտնել զինվորական կոմիսարին:

Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության զորակոչային բժշկական հանձնաժողովները, համապատասխան ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության տնօրենի առաջարկությամբ և մարզպետների (Երևանի քաղաքապետի) ներկայացմամբ, կազմավորվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով՝ մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 20-ը: ԱՊ ԶԲՀ-ների կազմում ընդգրկվում են թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, օտոլարինգոլոգ, մաշկաբան և բուժքույր-քարտուղարը:

ԱՊ ԶԲՀ-ի գործառույթներն են՝

1) զինապարտներին զինվորական հաշվառման, զորակոչի, վարժական հավաքների, ինչպես նաև զինված ուժերի համար մասնագետների պատրաստության և ՌՈՒՀ-երի թեկնածուների ընտրության ժամանակ փորձաքննության ենթարկելը.

2) պահեստազորում հաշվառված զինապարտներին փորձաքննության ենթարկելը.

3) զինապարտների պիտանիության վերաբերյալ եզրակացություն կայացնելը.

4) փորձաքննության արդյունքներն ամփոփելը և դրա մասին զինվորական կոմիսարին հայտնելը:

ԿԲՀ-ն բժշկական փորձաքննության մարմին է, որի անհատական կազմը հաստատվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: ԿԲՀ-ի կազմում ընդգրկվում է հանձնաժողովի նախագահը, տեղակալը (բժիշկ), անդամները՝ թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, մաշկաբան, օտոլարինգոլոգ, համակարգչային օպերատոր ու քարտուղար: ԿԲՀ-ն բժշկական փորձաքննության ղեկավար մարմին է և հաշվետու է ՀՀ պաշտպանության նախարարին:

Որպես զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացման վերաբերելի ԿԲՀ-ի գործառույթներ կարելի է առանձնացնել՝

1) բժշկական փորձաքննության ենթարկել զինկոմիսարիատներում նախնական բժշկական հետազոտում և փորձաքննություն անցած զորակոչիկներին,

2) նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական փորձաքննության աշխատանքներում գործնական և մեթոդական օգնություն ցուցաբերել զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին,

3) նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց հետազոտման և բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համագործակցել առողջապահական մարմինների հետ,

4) զորակոչիկների բժշկական փորձաքննության արդյունքներով կայացնել եզրակացություն,

5) վերահսկել զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների գործունեությունը,

6) անհրաժեշտության դեպքում վերանայել նախկինում կայացրած իր եզրակացությունները:

Զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացման հետ կապված որոշակի գործառույթներ են վերապահված նաև ռազմաբժշկական հանձնաժողովներին, մասնավորապես պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում զորակոչիկների պիտանելիության հարցը որոշում է կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը:

Բացի այդ, առանձին դեպքերում, ախտորոշումը ճշտելու նպատակով կամ հետազոտական փաստաթղթերի միջև հակասությունների դեպքում, ԿԲՀ-ն կարող է զորակոչիկին ռազմաբժշկական կամ քաղաքացիական բժշկական հաստատություն լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտության ուղեգրելու վերաբերյալ տալ եզրակացություն: Քաղաքացու առողջական վիճակի փորձաքննության արդյունքում ԿԲՀ-ի կողմից կայացվում է եզրակացություն:

Առանձին դեպքերում, ախտորոշումը ճշտելու նպատակով կամ հետազոտական փաստաթղթերի միջև հակասությունների դեպքում, ԿԲՀ-ն կարող է զորակոչիկին ռազմաբժշկական կամ քաղաքացիական բժշկական հաստատություն լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտության ուղեգրելու վերաբերյալ տալ եզրակացություն:

Եթե զինապարտը բժշկական փորձաքննության ժամանակ ճանաչվել է բուժման կարիք ունեցող, ապա զինվորական կոմիսարը նրան ուղարկում է համապատասխան բուժհիմնարկ: Բուժման ավարտից հետո զինապարտը ենթարկվում է կրկնակի փորձաքննության տվյալ զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովում:

Հավելված Բ.

Նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական հետազոտությունները.

Նախազորակոչային տարիքի (14-15 տարեկան, 16-18 տարեկան, զինվորական հաշվառում) քաղաքացիների բժշկական հետազոտությունները ներառում են՝

1) արտաքին մարմնական զննումը.
2) մարդաչափությունը.
3) արտաքին շնչառական ֆունկցիայի որոշումը (սպիրոմետրիա)՝բժշկական ցուցումի դեպքում.
4) ուժաչափությունը (դինամոմետրիա)՝ բժշկական ցուցումի դեպքում.
5) ֆլյուորոգրաֆիա կամ կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտությունը.
6) արյան խմբի և ռեզուս պատկանելության որոշումը.
7) մեզի և արյան ընդհանուր քննությունը.
8) էլեկտրասրտագրումը.
9) որովայնի օրգանների ՈՒՁ հետազոտությունը.
10) կանխարգելիչ պատվաստումները՝ համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված պատվաստումների ազգային օրացույցի:

Զորակոչային տարիքի (18-27 տարեկան՝ ներառյալ պարտադիր զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրված և 27 տարին չլրացած, ինչպես նաև 27 տարեկանից հետո՝ օրենքով սահմանված կարգով զորակոչի ենթակա) քաղաքացիների բժշկական հետազոտությունները ներառում են՝

1) արտաքին մարմնական զննումը.
2) մարդաչափությունը.
3) արտաքին շնչառական ֆունկցիայի որոշումը (սպիրոմետրիա).
4) ուժաչափությունը (դինամոմետրիա).
5) միկրոպրեցիպիտացիայի ռեակցիան.

6) արյան խմբի և ռեզուս պատկանելության որոշումը (եթե կատարված չէ), որի վերաբերյալ գրառումը պարտադիր կատարվում է զինվորական գրքույկում.
7) ֆլյուորոգրաֆիա կամ կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտությունը.
8) մեզի և արյան ընդհանուր քննությունը.
9) էլեկտրասրտագրումը.
10) որովայնի օրգանների ՈՒՁ հետազոտությունը.
11) տուբերկուլինային մաշկային փորձը.
12) կանխարգելիչ պատվաստումները՝ համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված պատվաստումների ազգային օրացույցի:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների պատվաստումների՝ ժամանակին և ամբողջական կատարման համար պատասխանատու է քաղաքացու հաշվառման ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության ղեկավարը, իսկ ընդհանուր գործընթացի համակարգումը, համաճարակաբանական դիտարկումը և վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով համատեղ միջոցառումներ:

Ուշադրություն՝

Տուբերկուլյոզի կանխարգելման և վաղ հայտնաբերման նպատակով, նախազորակոչիկների ու զորակոչիկների նկատմամբ, <u>անկախ տուբերկուլյոզին քնորոշ գանգատների,</u> կատարվում են հետևյալ հետազոտությունները՝ ՄԱՆՏՈՒ 2 ՏԵ (TE) փորձը, խորխի (առկայության դեպքում) եռակի բակտերիոսկոպիա, ռենտգենաբանական հետազոտություն (եթե կա անհրաժեշտություն՝ նախորդ երկու հետազոտությունների տվյալներից ելնելով):

Հավելված Գ

Դիմումների օրինակելի ձևեր

Այլընտրանքային զինվորական ծառայության անցնելու վերաբերյալ

_____ տարածքային զինվորական կոմիսար

_____ին

Դիմող՝ _____ _____ _____ -ից
անուն ազգանուն հայրանուն

Բնակվող՝ _____
նշել Ձեր բնակության վայրի հասցեն

Դիմում

Հարգելի պարոն _____,

Ես՝ _____ _____ _____, ծնված _____, ՀՀ, ք. _____
անուն ազգանուն հայրանուն ամիս/ամսաթիվ ծննդավայր

հաշվառված եմ _____, հանդիսանում եմ ՀՀ քաղաքացի:
հաշվառման հասցե

Դավանում եմ _____ կրոնը, կամ ունեմ _____
նշել կրոնի, դավանանքի անվանումը նշել համոզմունքի անվանումը

համոզմունքները:

Իմ կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հատուկ հիմնական արժեքներն են _____
նշել դավանանքին կամ համոզմունքներին բնորոշ հատկանիշները, առանձնակի շեշտադրելով այն հատկանիշները,

_____
որոնք վկայում են այն մասին, որ զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը հակասում է Ձեր դավանանքին կամ համոզմունքներին

_____

_____

_____ թվականից հանդիսանում եմ _____ կրոնական
ամիս ամսաթիվ կրոնական կազմակերպության անվանումը

կազմակերպության անդամ /եթե հանդիսանում եք/:

Այսպիսով, իմ կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը /նշել թե ինչն է հակասում/:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և առաջնորդվելով «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ դրույթներով՝ խնդրում եմ ինձ ուղարկել այլընտրանքային զինվորական ծառայության:

Դիմող՝ _____

ստորագրություն անուն ազգանուն

_____
ներկայացման ամիս/ ամսաթիվ

Այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնելու վերաբերյալ

_____ տարածքային զինվորական կոմիսար

_____ին

Դիմող՝ _____ _____ _____ -ից
անուն ազգանուն հայրանուն

Բնակվող՝ _____
նշել Ձեր բնակության վայրի հասցեն

Դիմում

Հարգելի պարոն _____,

Ես՝ _____ _____ _____, ծնված _____, ՀՀ, ք. _____
անուն ազգանուն հայրանուն ամիս/ամսաթիվ ծննդավայր

հաշվառված եմ _____, հանդիսանում եմ ՀՀ քաղաքացի:
հաշվառման հասցե

Դավանում եմ _____ կրոնը, կամ ունեմ _____
նշել կրոնի, դավանանքի անվանումը նշել համոզմունքի անվանումը

համոզմունքները:

Իմ կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հատուկ հիմնական արժեքներն են _____
նշել դավանանքին կամ համոզմունքներին բնորոշ հատկանիշները, առանձնակի շեշտադրելով այն հատկանիշները,

_____
որոնք վկայում են այն մասին, որ զինվորական ծառայություն անցնելը ընդհանրապես հակասում է Ձեր դավանանքին կամ համոզմունքներին

_____

_____

_____թվականից հանդիսանում եմ _____ կրոնական
ամիս ամսաթիվ կրոնական կազմակերպության անվանումը

կազմակերպության անդամ /եթե հանդիսանում եք/:

Այսպիսով, իմ կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայության անցնելը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և առաջնորդվելով «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ դրույթներով՝ խնդրում եմ ինձ ուղարկել այլընտրանքային աշխատանքային ծառայության:

Դիմող՝ _____
ստորագրություն անուն ազգանուն

_____
ներկայացման ամիս/ ամսաթիվ

Առողջական վիճակի հետազոտման ակտը/պիտանելիության վերաբերյալ կայացված որոշումները ստանալու վերաբերյալ

_____ տարածքային զինվորական կոմիսար

_____ին

Դիմող՝ _____ _____ _____ -ից
անուն ազգանուն հայրանուն

Բնակվող՝ _____
նշել Ձեր բնակության վայրի հասցեն

Դիմում

Հարգելի պարոն _____,

Ես՝ _____ _____ _____, ծնված _____, ՀՀ, ք. _____
անուն ազգանուն հայրանուն ամիս, ամսաթիվ ծննդավայր

հաշվառված եմ _____, հանդիսանում եմ ՀՀ քաղաքացի:
հաշվառման հասցե

_____անցել եմ բժշկական փորձաքննություն:
ամիս, ամսաթիվ

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել իմ առողջական վիճակի հետազոտման ակտի/ ակտերի, Զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի որոշման պատճենները:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Դիմող՝ _____
ստորագրություն անուն ազգանուն

_____
ներկայացման ամիս/ ամսաթիվ

Առողջական վիճակի հետազոտման ակտը, պիտանելիության վերաբերյալ կայացված որոշումները ստանալու վերաբերյալ

Հանրապետական զորակոչային
հանձնաժողովի նախագահ
Դ. Տոնոյանին

Դիմող՝ _____ _____ _____ -ից
անուն ազգանուն հայրանուն

Բնակվող՝ _____
նշել Ձեր բնակության վայրի հասցեն

Դիմում

Հարգելի պարոն Տոնոյան,

Ես՝ _____ _____ _____, ծնված _____, ՀՀ, ք. _____
անուն ազգանուն հայրանուն ամիս, ամսաթիվ ծննդավայր

հաշվառված եմ _____, հանդիսանում եմ ՀՀ քաղաքացի:
հաշվառման հասցե

_____անցել եմ բժշկական փորձաքննություն:
ամիս, ամսաթիվ

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել իմ առողջական վիճակի հետազոտման բոլոր ակտի/ ակտերի, ներառյալ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության, Հանրապետական զորակոչային հանձնաժողովի որոշման պատճենները:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Դիմող՝ _____
ստորագրություն անուն ազգանուն

_____
ներկայացման ամիս/ ամսա

Հավելված Դ.

Քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները (աղյուսակ1) և զինվորական ծառայության ընթացքում չթույլատրվող ֆիզիկական վարժությունների ցանկը (աղյուսակ 2)

Կիրառելի օրենդրություն.

ՀՀ կառավարության 12.04.2018թ. «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» թիվ 404-Ն որոշումը:

Սույն կառավարության որոշմամբ սահմանվում է.

1) զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը

2) քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները՝ ըստ զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի 1-ին և 3-րդ սյունակներով փորձաքննվողների զինվորական ծառայության սահմանափակումների բնութագրերի և զինվորական ծառայության ընթացքում չթույլատրվող ֆիզիկական վարժությունների:

Աղյուսակ 1. Քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները՝ ըստ զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի փորձաքննվողների զինվորական ծառայության սահմանափակումների բնութագրեր.

Հոդված	Առաջնագծում մարտական հերթապահությանը, հրետանու կրակային, ՀՕՊ-ի մեկնարկային դիրքերում ու կապի հանգույցներում մարտական հերթափոխի և պահակային ծառայությանը չեն ընդգրկվում	Ֆիզիկական պատրաստությունը կազմակերպվում է՝ հիմք ընդունելով չթույլատրվող ֆիզիկական վարժությունները	Հակացուցված է ծովի մակերևույթից 2500մ և բարձր գոտիներում ծառայության	Հակացուցված է ծառայությունը խոնավ և ցուրտ եղանակային պայմաններում անընդմեջ երկու ամիս և ավելի ժամկետով	Արգելվում է վարել տրանսպորտային միջոցներ և տեխնիկա	Անձնակազմի ղեկավարման սահմանափակում	Ծառայություն հեշտացված օրվա կարգացուցակով	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8	9
1գ	*(տողն ուժը կորցրել է 25.07.19)*							
2բ								
4բ								
5գ								
6բ								
7գ								
9գ								
10գ								
11գ								

17p								
20q								
20t								
21q								
23q								
24q								
25n								
26n								
27n								
28p								
30q								*
30t								
31n								
32q								
33q								
34q								*
36q								
37q								
38q								*
39q								*
40p								*
41p								*
42q								
43q								
47q								*
48t								
49q								

52բ								*
53բ								*
54գ								
55ա								
60								
61գ								
63գ								
68գ								
70բ								*
77բ								
84գ								
85գ								
86դ								
86ե								
89դ								*

1. Սույն սահմանափակումները հիմք ընդունելով հրամանատարները և կադրային մարմինները պետք է ապահովեն ծառայության այնպիսի պայմաններ, որոնք, չնայած զինծառայողի առողջական սահմանափակումներին, հնարավորություն կընձեռնեն վերջինիս շարունակել ծառայությունն իր պաշտոնում և միայն եզակի դեպքերում միջնորդել այլ պաշտոնի նշանակման: Միևնույն ժամանակ դրանք հստակեցնում են զորամասի տեսչական և ամփոփիչ ստուգումների ընթացքում ֆիզիկական և շարային պատրաստության ստուգողական պարապմունքների սահմանափակումները:

2. Զինծառայողներին առողջական սահմանափակումով պաշտոնների նշանակման կադրային առաջարկներ ներկայացնելիս հաշվի են առնվում հավելված 4-ի՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ սյունակներում ներառված և 9-րդ սյունակի ** -ով նշված սահմանափակումները:

գույնով նշված են հակացուցումները:

.

4. **«Հակացուցված է ծառայությունը խոնավ և ցուրտ եղանակային պայմաններում անընդմեջ երկու ամիս և ավելի ժամկետով»** վերաբերում է զորանոցային պայմաններից դուրս (ճամբարային հավաքներ, զորավարժություններ, մարտական հերթապահություն և այլն) գտնվելու ժամանակահատվածին:

5. Աստղանիշներն ունեն հետևյալ նշանակությունը՝

* ախտահարման անատոմիական տեղակայումը և բարդությունը նկատի ունենալով՝ զորամասի բժշկի կողմից սահմանվում են չթույլատրվող ֆիզիկական վարժություններ կամ սահմանափակում ծառայության որոշակի խնդիրներ կատարելու առումով (չի հանդիսանում ծառայողական պարտականություններից մասնակի կամ լրիվ ազատում),

** մշտապես գտնվելու է զորամասի բժշկի մասնագիտացված հսկողության ներքո:

Աղյուսակ 2. Քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները՝ ըստ զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի փորձաքննվողների զինվորական ծառայության ընթացքում չթույլատրվող ֆիզիկական վարժություններ

Հոդված	Ուժային վարժություններ՝ վարժություններ պտտաձողի և զուգափայտի վրա, կշռաքարերի բարձրացում	Արագության վարժություններ՝ վազք 100մ, 60մ,10x10մ	Վազք 1000մ, 400մ, 4x100մ	Դիմացկունության վարժություններ՝ 3000մ և ավելի վազք ներառող վարժություններ	Ճարպկություն՝ ցատկ նժույգի կամ այծի վրայով	Արգելագոտու հաղթահարում	Սահմանա-փակումները սահմանվում են զորամասի բժշկի որոշմամբ
1	2	3	4	5	7	8	9
2բ							
10գ							
11գ							
17բ							
20գ							
20ե							
24գ							
25դ							
26դ							
27դ							
28բ							
30ե							
31դ							
32գ							
33գ							

36գ							
37գ							
38գ							
39գ							
40բ							
41բ							
42գ							
43գ							
47գ							
48ե							
49գ							
55ա							
61գ							
84գ							
85գ							
86դ							
86ե							

Սույն սահմանափակումները հիմք ընդունելով հրամանատարները և կադրային մարմինները պետք է ապահովեն ծառայության այնպիսի պայմաններ, որոնք, չնայած զինծառայողի առողջական սահմանափակումներին, հնարավորություն կընձեռեն վերջինիս շարունակել ծառայությունն իր պաշտոնում և միայն եզակի դեպքերում միջնորդել այլ պաշտոնի նշանակման: Միևնույն ժամանակ դրանք հստակեցնում են զորամասի տեսչական և ամփոփիչ ստուգումների ընթացքում ֆիզիկական և շարային պատրաստության ստուգողական պարապմունքների սահմանափակումները:

2. Զինծառայողներին առողջական սահմանափակումով պաշտոնների նշանակման կադրային առաջարկներ ներկայացնելիս հաշվի են առնվում հավելված 4-ի՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ սյունակներում ներառված և 9-րդ սյունակի ** -ով նշված սահմանափակումները:

3. գույնով նշված են հակացուցումները:

4. **«Հակացուցված է ծառայությունը խոնավ և ցուրտ եղանակային պայմաններում անընդմեջ երկու ամիս և ավելի ժամկետով»** վերաբերում է զորանոցային պայմաններից դուրս (ճամբարային հավաքներ, զորավարժություններ, մարտական հերթապահություն և այլն) գտնվելու ժամանակահատվածին:

5. Աստղանիշներն ունեն հետևյալ նշանակությունը

ախտահարման անատոմիական տեղակայումը և բարդությունը նկատի ունենալով՝ զորամասի բժշկի կողմից սահմանվում են

* չթույլատրվող ֆիզիկական վարժություններ կամ սահմանափակում ծառայության որոշակի խնդիրներ կատարելու առումով (չի հանդիսանում ծառայողական պարտականություններից մասնակի կամ լրիվ ազատում),

** մշտապես գտնվելու է զորամասի բժշկի մասնագիտացված հսկողության ներքո:

Իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք
3. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք
4. «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենք
5. «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենք
6. «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենք
7. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք
8. «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենք
9. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք
10. ՀՀ Կառավարության 14.04.2018թ. «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման եւ բժշկական փորձաքննության, հետազոտման եւ փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները եւ դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների եւ բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու եւ ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 405-Ն որոշում
11. ՀՀ կառավարության 12.04.2018թ. «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաեւ քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» թիվ 404-Ն որոշում:
12. ՀՀ կառավարության 12.04.2018թ. որոշումը՝ «Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու, ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N 117-ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև ՀՀ

կառավարության 2000 թվականի հունվարի 13-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

13. ՀՀ կառավարության 12.04.2018թ. որոշումը՝ «Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին»
14. ՀՀ Կառավարության 12.04.2018թ. թիվ 457-Ն որոշումը՝ «Մշակույթի եւ արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին»
15. ՀՀ կառավարության 18.08.2018թ. թիվ 898-Ն որոշումը՝ ՀՀ տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելիս եւ արձակուրդի անցկացման վայրից վերադառնալիս զինծառայողի տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու կարգը եւ պայմանները, զինվորական ծառայությունից արձակվելիս չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց զինծառայողին տրվող փոխհատուցման չափը սահմանելու, ինչպես նաև ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի N 778 եւ 2004 թվականի մայիսի 6-ի N 886-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին
16. ՀՀ Կառավարության 16.02.2019թ. թիվ 89-Ն որոշումը՝ «Քաղաքացուն բացառիկ դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կարգը սահմանելու մասին»
17. ՀՀ կառավարության 22.12.2007թ. թիվ 1390-Ն որոշումը՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանք ներկայացնելու կարգը ՀՀ կառավարության 22.12.2007թ. թիվ 1390-Ն որոշմամբ
18. ՀՀ պաշտպանության նախարարի 25.06.2018թ. թիվ 8 հրամանը՝ Հայտարարված շարքային և սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի շրջանակներում պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների ծառայության վայրեր նշանակումը կենտրոնացված ձևով և

վիճակահանությամբ իրականացնելու, շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիներին զինված ուժերի պատվո պահակային վաշտում, երգի և պարի համույթում, գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում և զորամասերի նվագախմբերում, արդի տեխնոլոգիաների խմբում, տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության նշանակելու նպատակով ընտրության կարգերը սահմանելու, ինչպես նաև վիճակահանության եւ ընտրության մրցութային հանձնաժողովներ ստեղծելու մասին

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը

ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

Ինչով ենք մենք զբաղվում

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գործում է հետևյալ ոլորտներում՝ մարդու իրավունքների պաշտպանություն, շահերի պաշտպանություն և քաղաքացիական նախաձեռնություններ, խաղաղասիրություն: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը քննարկումների, սեմինարների, հանրային լսումների, (համատեղ) ակցիաների, դասընթացների, իրավական ակցիաների, քաղաքացիական մասնակցության, հրապարակումների, ուսումնասիրությունների/հետազոտությունների, մոնիթորինգի, լոբբինգի, ԶԼՄ-ների ներգրավման, հեռուստատեսային և ռադիո քննարկումների ու բանավեճերի միջոցով իրականացնում է իր գործունեության ոլոտները:

Ինչու դիմել մեզ

Եթե խախտվել են Ձեր իրավունքներն ու ազատությունները պետական մարմինների կողմից, և Դուք իրավական խորհրդատվության կարիք ունեք, որը տրամադրվում է **անվճար:**

Ինչպես գտնել մեզ

Դուք կարող եք այցելել մեր գրասենյակ, զանգահարել, կապ հաստատել էլեկտրոնային նամակագրությամբ, մեր փոստային հասցեին ուղարկել նամակներ անձամբ կամ Ձեր բարեկամների միջոցով՝ մեզ տեղեկացնելով իրավական խնդիրների վերաբերյալ:

Մեր հասցեն Վանաձորում՝

ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր 2001, Տիգրան Մեծի 59
հեռ՝ +374 /322/ 4 22 68
բջջ. 094 042268
անվճար թեժ գիծ՝ 0 8000 12 11
կայքէջ՝ www.hcav.am
էլ. հասցե՝ hcav@hcav.am , asadikyan@hcav.am

Մեր հասցեն Երևանում՝

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 15/10

հեռ.՝ 010 544053

Նշումների համար